«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Դաստիարակ՝ Սուսան Մանուկյան

Մանկապարտեզ՝ « Սպիտակի թիվ 1 » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Ընտանեկան դաստիարակությունը և նախադպրոցականի անձի ձևավորման հիմնախնդիրը.....5

1.2 Նախադպրոցական ուսումնական հաստատություն-ծնող համագործակցության դերը երեխայի կրթության ու դաստիարակության վրա …….....9

ԳԼՈՒԽ 2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԵՎ ԾՆՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ

2.1 Համագործակցության կարևորության բացահայտում և գնահատում…….....14

Եզրակացություն.....17

Օգտագործված գրականության ցանկ……....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ընտանեկան դաստիարակությունը, ընտանեկան փոխհարաբերությունների և ընտանիքի հիմնախնդիրները ներկայումս դարձել են առավել արդիական: Հատկապես նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության մեջ անկյունաքարային և անփոխարինելի է ծնողի դերակատարումը: Սակայն պետք է նկատել, որ այս տարիքային խմբի սաների կայուն զարգացման համար մեծ նշանակություն ունի նաև ծնողի կամ օրինական ներկայացուցչի արդյունավետ համագործակցությունը նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ: Այս համագործակցությունն իր նպաստն է բերում, որ երեխան մանկապարտեզում ձեռք բերած հմտությունները, կարողությունները, գիտելիքները կարողանա կիրառել նաև հաստատությունից դուրս՝ ծնողի օգնությամբ և աջակցությամբ: Ստացվում է, որ ծնողի և մանկապարտեզի համագործակցության արդյունքում երեխայի կրթությունն ու դաստիարակությունաը կրում է շարունակական ընթացք:

Այս երկու օղակներն ունեն ընդհանուր նպատակներ՝ ապահովել նախադպրոցականների կրթության և զարգացման համար հարմարավետ պայմաններ թե' ընտանիքում, թե' մանկապարտեզում: Սույն խնդրի ուսումնասիրումն ու հետազոտումն ինչպես սցիալ-հոգեբանական, այնպես էլ մանկավարժական ու հասարակական արդիական հիմնախնդիրներից է, ուստի և մանկապարտեզ-ընտանիք արդյունավետ համագործակցության կարևորմամբ էլ պայմանավորել ենք սույն հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական մանկավարժական աշխատողների և երեխայի ընտանիքի համագործակցության տարբեր ձևերի և մեթոդների միջոցով նախադպրոցականների կրթության, զարգացման և դաստիարակության իրականացման հարցերը:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսական մոտեցումները, մեկնաբանությունները:
- Լուսաբանել ընտանեկան դաստիարակության դերը նախադպրոցականի անձի ձևավորման գործում:
- Կարևորել ընտանեկան կայուն միջավայրի դրական ազդեցությունը

նախադպրոցականի կայուն ու ներդաշնակ զարգացման վրա:

- Դիտարկել նախադպրոցական ուսումնական հաստատություն-ծնող համագործակցության կարևորության հիմնահարցը՝ երեխայի ներդաշնակ զարգացման առումով:

ԳԼՈՒԽ 1.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Ընտանեկան դաստիարակությունը և նախադպրոցականի անձի ձևավորման հիմնախնդիրը

Ընտանիքը բոլոր ժամանակներում եղել է հասարակության արժեքային համակարգի կրողը, չնայած նրան, որ պատմամշակութային յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դրել ընտանեկան արժեքների, սովորույթների և ավանդույթների ձևավորման և հասարակության կողմից դրանց ընկալման վրա: Այն հանդիսանում է սոցիալ-մշակութային այն միջավայրը, որտեղ երեխան ստանում է առաջին պատկերացումները ընտանեկան արժեքների, սովորույթների և ավանդույթների մասին: Վստահություն, հանգստություն, ջերմություն ի տարբերություն օտարության և սառնության. այս բոլոր հատկությունները ձեռք են բերվում ընտանիքում: Ընտանեկան դաստիարակության մշակույթն ունի ոչ միայն պահպանող, այլև զարգացնող բնույթ: Եթե նախնադարում աճող սերնդին դաստիարակում էին զուտ ցեղային ծեսերի նկատմամբ հավատարմություն պահպանելու տաբուներով, ապա այսօր անհրաժեշտություն է դարձել, օրինակ, երեխաների մեջ դաստիարակել թվայնացված իրականությունից օգտվելու առողջ վարքագիծ: Ուստի անհրաժեշտ է վեր հանել այն ընտանեկան արժեքների, սովորույթների ու ավանդույթների բնորոշ գծերը, որոնք դրականորեն ազդում են երեխաների դաստիարակության գործընթացի վրա: Ընդհանուր առմամբ, հասկանալի է, որ ընտանեկան արժեքներ ձևավորողները բոլոր նրանք են, ովքեր հասարակության համար ընդունելի են համարվում: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում և տարբեր պատճառներով կան ընտանիքներ, որոնց արժեքները բացասական կամ վատ օրինակներ են: Կարևոր է, որ ընտանիքներն ունենան հստակ սահմանված արժեքներ, որոնց վրա հիմնված են, քանի որ, իր հերթին, դրանք կփոխանցվեն իրենց հետնորդներին: Հետևողական արժեքներ ունենալը ընտանիքի կերտման, նրա միասնության և իր բոլոր անդամների շրջանում վստահության մի մասն է[1]:

Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման

[1] https://hy.warbletoncouncil.org/valores-familiares-1850

գործընթացում ընտանիքը և ծնողներն ունեն անփոխարինելի դեր. այս միջավայրում է տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, ձևավորվում դերային և վարքագծային կարծրատիպերը, արժեքային կողմնորոշումներն ու աշխարհայացքը: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, հոգեբանական աջակցություն ու հարմարավետություն ապահովում: Հետևաբար, բարդույթներից զերծ, հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջներն ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման առաջնային նախադրյալը բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ու հոգեբանական և սոցիալական խնդիրները հաղթահարելու կարողություններ ունեցող, դաստիարակչական և սոցիալականացման գործառույթներ իրականացնող, երեխայի իրավունքները, նրա հանդեպ պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է: Ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, կենցաղային խնդիրներին դիմագրավելու կարողությունը ձևավորվում են միայն այն դեպքում, երբ երեխան մանկուց ականատես է եղել անկեղծ ու ջերմ մարդկային հարաբերությունների, ինչը ակնկալվում է ընտանիքում[2]: Այսպիսով, ընտանիքի միջավայրը, այնտեղ տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, ծնողների ծնողավարական հմտությունների զարգացվածությունը մեծ նշանակություն ունեն նախադպրոցական տարիքի երեխաների կայուն զարգացման և ծնողների հետ համագործակցության համար:

Ծնողների հետ փոխազդեցության ընթացքում նախադպրոցականի դրական հուզական վերապրումները ընտանիքում ստեղծում են փոխադարձ վստահության մթնոլորտ, որը պակաս կարևոր չէ անձնային հատկությունների զարգացման համար: Առավել ևս ապացուցված է, որ մանկական սոցիալական միջավայրի կառուցման մեջ որոշիչ դերը ընտանեկան միջավայրինն է: Երեխա–ծնող ոչ արդյունավետ հարաբերություններում հուզական բաղադրիչի խանգարումներից են ծնողների տագնապայնությունը և տարբեր ֆոբիաները, ծնողական զգացմունքների պակաս զարգացվածությունը, երեխաների նկատմամբ քնքշության, հոգատարության բացակայությունը: «Հուզական բարենպաստությունը» այն հիմքն է, որի վրա պետք է կառուցվի երեխաների հետ ուսուցիչների և ծնողների շփումը:

[2] Ковтуненко Л. В. Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей // «Вестник Воронежского института МВД России», 2012, № 3, էջ 137-143

Ծնողների, եղբայրների և քույրերի, տատիկների և պապիկների հետ շփման ընթացքում երեխան ստանում է օգտակար տեղեկատվություն, որը հանգեցնում է նրա հետագա զարգացմանը: Դրա հետ մեկտեղ ընտանիքի հուզական մթնոլորտը հիմք է հանդիսանում շրջապատող միջավայրում ստացած տեղեկատվության օգտագործման առումով: Վստահելի շփման, փոխադարձ հարգանքի, ցանկացած նոր գործի մեջ ծնողների փոխըմբռնման և բարեհամբուրության վրա հիմնված ծնող–երեխա փոխհարաբերությունները նախադպրոցականի գործողություններին վստահություն են ներշնչում, ինչը հանգեցնում է ոչ միայն իմացական որակների զարգացմանը, այլև այլ մարդկանց հետ շփման մեջ հոգեկան բարեհարմարությանը: Այսպիսով՝ երեխաների նկատմամբ ծնողների վերաբերմունքը մեծ նշանակություն ունի ընտանիքի կրթական միջավայրում նախադպրոցականի հոգեբանական առանձնահատկությունների զարգացման գործում և այդ պատճառով պետք է կառուցվի վստահության, սիրո հենքի վրա:

Ընտանիքը, որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա շատ կարևոր են երեխայի բնականոն զարգացման համար: Սա այն միջավայրն է, որտեղ ծնվում ու աշխարհաճանաչողության սկզբնական քայլերն է անում մանուկը, պատանին, դեռահասը, ուստի ծնողի և ընտանեկան միջավայրի ուղիղ ներգործությունը ողջ կյանքի վրա ունենում է մեծ ազդեցություն: Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր)[3] : Որպեսզի դաստիարակչական գործընթացն ընտանիքում անցնի արդյունավետ,

[3] ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 1, կետ 7:

հարկավոր է, որ ծնողներն առաջին հերթին բացառեն որևէ բռնություն, վատ կամ բացասական ներգործություն երեխայի վրա: Սա կարող է կազմաքանդել երեխայի բնականոն հոգեկան զարգացումն ու անդառնալի հետևանքներ ունենալ: Ծնողական սերն ու հոգատարությունը կենսական անհրաժեշտություն են երեխայի գոյապահպանման համար: Հակառակ դեպքում՝ մի կողմից անտարբերությունն ու եսասիրությունը, մյուս կողմից ծնողական սիրո բացակայությունը հանգեցնում են ատելության, արհամարանքի՝ ծանրացնելով թե' երեխայի, թե' ծնողի կյանքը[4] :

Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակությունը: Կարգապահության լավագույն դպրոցը հենց ընտանիքն է, որի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է, ուստի ծնողն ինքը պետք է ունենա բարձր արժեքներ, գիտակցական համապատասխան մակարդակ, ծնողավարական հմտություններ: Բացի դա, երեխաների դաստիարակության գլխավոր դպրոցը ծնողների փոխհարաբերություններն ու վերաբերմունքն է միմյանց նկատմամբ, ուստի, ընտանեկան դաստիարակության շատ դժբախտությունների արմատները թաղված են հենց այնտեղ, ուր ծնողները երեխային մանկությունից չեն սովորեցրել ղեկավարել սեփական ցանկությունները, չեն սովորեցրել ճիշտ վերաբերվել մեծերին, բարեվարք պահել շրջապատում:

[4] ՀՊՄՀ, «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում», Երևան, 2016, էջ 11:

1.2 Նախադպրոցական ուսումնական հաստատություն-ծնող համագործակցության դերը երեխայի կրթության ու դաստիարակության վրա

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական գործընթացի արդիականացումն ու սաների առաջադիմությունը մեծապես կախված է նախադպրոցական մանկավարժի մասնագիտական ու մարդկային որակներից: Անչափ կարևոր ենք համարում վերջինիս մասնագիտական պատրաստվածությունը նորարարական գործիքների ու մեթոդների կիրառման առումով: Կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց մանկավարժի մասնակցության և աջակցության: Ստացվում է՝ վերջինս իր մարդկային ու մասնագիտական բարձր որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել նախադպրոցական կրթության պետական չափորոշչով սահմանված վերջարդյունքների դրական ելքերին: Միևնույն ժամանակ՝ կարողունակ մանկավարժը կարող է համագործակցային հարաբերություններ հաստատել սաների ծնողների հետ՝ նպաստելով վերջիններիս ծնողավարական հմտությունների զարգացմանը, երեխաների հետ արդյունավետ շփելու կարողության ձևավորմանը:

Սակայն այս տեսակետից շատ կարևոր է նաև ծնողի պատասխանատու վերաբերմունքն իր երեխայի նկատմամբ: Ընդառաջ գնալով իր երեխայի բնականոն զարգացմանն ուղղված դաստիարակի ջանքերին՝ ծնողը դառնում է այդ գործընթացի մասնակից կողմը: Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել մանկավարժի

աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել նախադպրոցականի կայուն զարգացմանը:

Նախադպրոցական ուսումնական հաստատության և ընտանիքի համագործակցությունը երկարատև ու բարդ գործընթաց է, որի հիմքում պետք է դրված լինեն մի շարք սկզբունքներ, որոնց թվում են.

- Փոխադարձ հարգանքը
- Առողջ բարոյահոգեբանական միջավայրը
- Ընդհանուր շահի շուրջ բանակցելու, ելքեր գտնելու կարողությունը
- Արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմների գործարկումը
- Մշտադիտարկումը
- Սխալների ընդունումը, վերլուծություն, թերի կողմերի արձանագրումը
- Ինքնանդրադարձ կատարելու կարողությունը
- Հումանիստական մղումները
- Սեփական շահի ստորադասումը
- Անձնային բարձր որակների դրսևորումը:

Նախադպրոցական ուսումնական հաստատության և ընտանիքի համագործակցության ձևերն են՝

- Ծնողական ժողով
- Այցելություն երեխայի ընտանիք
- Առցանց կապ
- Հարցազրույց
- Էքսկուրսիաներ

Այս երկու օղակների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և մանկավարժները պատասխանատվություն են կրում միևնույն երեխայի դաստիարակության ու զարգացման համար: Շատ կարևոր է նաև ծնողի կողմից ազնիվ ու անվերապահ մոտեցումը մանկավարժին: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության ու զարգացման գործընթացում, երեխան ունի ավելի բարձր արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, երեխայի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները, և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են,

որոնք ազդում են նախադպրոցականի վրա: Մանկապարտեզի մանկավարժները և երեխայի ծնողը համատեղ պարտավոր են՝

- երեխաների մեջ սերմանել հարգալից վերաբերմունք հայրենիքի, ազգային, պատմական, մշակութային արժեքների նկատմամբ.
- նախադպրոցական տարիքի երեխաների համար ապահովել նախադպրոցական կրթություն ստանալու անհրաժեշտ պայմաններ.
- մշտապես հոգալ երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության մասին, ապահովել պատշաճ պայմաններ երեխաների հակումների և ընդունակությունների զարգացման համար.
- հարգել երեխայի արժանապատվությունը
- երեխայի մեջ դաստիարակել աշխատասիրություն, հարգալից վերաբերմունք ավագների, մայրենի լեզվի, ազգային ավանդույթների և սովորույթների, շրջակա միջավայրի նկատմամբ[5]:

Ուսումնական գործընթացին ծնողների ներգրավվածությունը մեծապես կարող է պայմանավորել նախադպրոցականի հաջողությունը: Անկախ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ծնողի կրթության աստիճանից՝ վերջինիս ներգրավվածությունը երեխայի կրթության ու զարգացման գործընթացին անփոխարինելի կարելի է համարել:

Ի՞նչ է շահում դաստիարակը.

Ծնողի հետ շարունակական համագործակցությունը թույլ է տալիս դաստիարակին առավել շուտ ճանաչել երեխային, ծանոթանալ նրա նախասիրություններին առանձնահատկություններին: Միևնույն ժամանակ՝ արդյունավետ համագործակցությունը հնարավորություն է ստեղծում, որ դաստիարակը ստանա ծնողների աջակցությունը՝ երեխաների կրթության ու դաստիարակությանը վերաբերող մի շարք հարցերում:

Ի՞նչ է շահում ծնողը.

Մանկապարտեզի հետ շարունակական համագործակցությունը երեխայի ծնողին թույլ է տալիս ձեռք բերել ծնողավարական հմտություններ,

[5] «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28:

մանկավարժահոգեբանական աջակցություն, ճանաչել սեփական երեխային առավել խորը և, ի վերջո, մասնակցել վերջինիս կրթությանն ու դաստիարակությանը:

Ի՞նչ է շահում երեխան.

Երեխան առավել շատ է վստահում դաստիարակին, նրա հետ իրեն ապահով ու պաշտպանված է զգում, երբ վերջինս և իր ծնողը շարունակական հաղորդակցության մեջ են:

Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ նախադպրոցական կրթական համակարգում ավելի լավ արդյունքների հասնելու, սաների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար հաստատությունն ու մանկավարժական աշխատողները պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Շատ կարևոր է նաև սաների ծնողների համար մանկավարժական խորհրդատվությունների կազմակերպումը: Այս առումով մանկավարժը կարող օգտագործել մի շարք գործիքներ, որպեսզի ծնողների համար ապահովի մի շարք նեղ մասնագիտական կարողունակություններ, որոնք բնորոշ են մանկավարժական աշխատողներին, սակայն շատ կարևոր են նաև ծնողների՝ որպես երեխայի դաստիարակման առաջնային օղակի համար: Կարելի է կիրառել ՏՀՏ գործիքներ, որպեսզի ասելիքն ավելի պարզ ու հասանելի դառնա: Մանկավարժական համակողմանի խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը: Կարևոր հանգամանք է նաև երեխայի կարգավիճակը ընտանիքում: Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիքի հետ համագործակցության ակունքում: Այս մասով իր կարևոր գործառույթների փաթեթն ունի նախադպրոցական ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժը:

Երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար: Ընտանիքում երեխայի լիարժեք խնամքը և դաստիարակությունն ապահովելու

նպատակով պետությունը և նրա համապատասխան մարմիններն օգնություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին՝ երեխայի բարեկեցությունն ապահովելու համար, խրախուսում են ընտանիքին աջակցող հոգեբանական, մանկավարժական խորհրդատվական ծառայությունների գործունեությունը[6]:

Այսպիսով, եկանք այն համոզմունքին, որ նախադպրոցական մանկավարժական աշխատողներն ու ծնողները պետք է ունենան ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Մանկապարտեզը երեխային տալիս է գիտելիքներ, դաստիարակում է, զարգացնում է մի շարք կարողունակություններ, ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու, հարգելու, գնահատելու կարողությունները: Անձի ներդաշնակ զարգացման համար այս բոլոր որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Կարող ենք վերահաստատել այն պնդումը, որ նախադպրոցական մանկավարժական աշխատողների համագործակցությունը երեխայի ծնողների հետ երեխայի կրթության կազմակերպան ու դաստիարակության մեջ ունի առանցքային նշանակություն:

[6] «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 13:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԵՎ ԾՆՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ

2.1 Համագործակցության կարևորության բացահայտում և գնահատում

Մանկավարժական աշխատողի և ծնողի փոխգործակցության գործընթացն ուղղված է ծնողների ակտիվ ներգրավմանը կրթական գործընթացում՝ տոնահանդեսների, սպորտլանդիաների, բաց պարապմունքների նախապատրաստում, համատեղ դիդակտիկ նյութերի պատրաստում և այլն:

Սաների կրթական աշխատանքների կազմակերպման հաջողությունը կախված է նրանից, թե ինչպես կզարգանա մանկավարժական աշխատողի և սաների ծնողների համագործակցությունը: Որպեսզի բացահայտենք, թե որքանով են ծնողները կարևորում իրենք ներգրավվածությունը երեխաների կրթական համակարգում, կազմակերպեցինք ծնողական ժողով: Ժողովն անցկացրեցինք Խ.Ի.Կ. համակարգով:

Ծնողական ժողովին մասնակցեցին թիվ 1 մանկապարտեզի տնօրեն Հասմիկ Խաչատրյանը, մեթոդիստ Սուսաննա Ալեքսանյանը, լոգոպեդ Սիրանուշ Կարապետյանը և ավագ խմբի դաստիարակ սուսան Մանուկյանը:

Օրակարգ – Մանկապարտեզ-ծնող համագործակցության կարևորությունը ուսումնադաստիարակչական գործընթացում:

(Ծնողներին կտրամադրենք նկարներ պարապմունքների, զբոսանքի, խաղերի ժամանակ կատարված:)

Հարց ծնողներին – Ի՞նչ է իրենից ներկայացնում մանկապարտեզ-ծնող համագործակցությունը:

Խթանման փուլ – Ծնողները քննարկեցին, թե ինչպես են հասկանում այդ համագործակցությունը, ինչպես կարող են աջակցել մանկապարտեզում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

Իմաստի ընկալման փուլ – Ես ներկայացրեցի մանկապարտեզում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակությունը կրթական չափորոշիչների, դիտարկման թերթիկների և գնահատման մասին, նրանց ներգրավվածության կարևորությունը աշխատանքների պլանավորմանը:

Որոշվեց - Ապահովել ավելի սերտ համագործակցություն:

Կշռադատման փուլ .

Մանկապարտեզի տնօրենը արձանագրեց, որ՝

- Դաստիարակը հասավ իր նպատակին՝ ծնողների համար տեսանելի դարձավ փոխշահավետ համագործակցության կարևորությունը:
- Ծնողները շատ ակտիվ էին, ոգևորված:
- Դաստիարակի կողմից հետազոտվող թեման անչափ կարևոր է, որովհետև այս երկու օղակները՝ ընտանիքը և մանկապարտեզը ապահովում են երեխայի կյանքի փուլերը, զարգացումը և կրթադաստիարակչական գործընթացը և հետևաբար իրարից անջատ լինել չեն կարող:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ մանկապարտեզի և ծնողների սերտ համագործակցությունը կարող է ապահովել սաների կրթական աշխատաքների կազմակերպման գործընթացը, նպաստել երեխաների կարողությունների զարգացմանը:

Համագործակցությունը կարևոր է նաև այնքանով, որ ծնողներին անհրաժեշտ է մանկավարժական գիտելիքների համակարգ և դրանք կիրառելու կարողություն՝ հաշվի առնելով երեխաների տարիքային, սոցիալական և հոգեբանական առանձնահատկությունները:

Ծնողների հետ անցկացրեցինք նաև հարցազրույց՝ հետևյալ հարցադրումներով.

1. Ծանո՞թ եք նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացվող կրթադաստիարակչական ծրագրերին:
2. Կարևորու՞մ եք ծնող-մանկապարտեզ համագործակցությունը:
3. Համաձա՞յն եք աջակցել մանկապարտեզում իրականացվող կրթադաստիարակչական ծրագրերին:
4. Կցանկանա՞ք ընտանեկան դաստիարակության հարցերում ստանալ մանկավարժների կողմից աջակցություն:

Հարցազրույցի պատասխանները համակարգելուց հետո պարզ դարձավ, որ ծնողները պատրաստակամ են իրենց աջակցությունը ցուցաբերելու երեխաների զարգացմանն ուղղված կրթադաստիարակչական աշխատանքներին, ինչպես նաև ընտանեկան դաստիարակության մեջ մանկավարժների ներգրավմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով այս աշխատանքը, եկանք հետևյալ եզրահանգումներին.

- Ուսումնասիրելով համապատասխան գրականությունը և մեր կատարած աշխատանքը՝ պարզեցինք, որ դաստիարակի և ծնողի (նրանց օրինական ներկայացուցչի) համագործակցությունը չափազանց կարևոր դերակատարում ունի մանկապարտեզում կրթական աշխատանքների գրագետ կազմակերպման համար:
- Ուսումնասիրելով և մշակելով համագործակցության տարբեր ձևերը՝ պարզեցինք, որ դրանք կարող են լավագույնս նպաստել փոխվստահության ձևավորմանը, դրանք օգնում են միասին պլանավորել երեխաների կրթադաստիարակչական աշխատանքը:
- Պարզեցինք, թե որքանով են մեր մանկապարտեզում սաների ծնողները համագործակցում մանկավարժական աշխատողների հետ՝ ներգրավված լինելով կրթական աշխատանքների կազմակերպման մեջ: Ծնողական ժողովի, հարցաթերթիկի միջոցով արձանագրեցինք, որ ծնողական համայնքի համագործակցությունը մանկավարժական աշխատողների հետ կարևորում են ծնողների մեծ մասը:

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Մանկավարժները պետք է նախաձեռնող լինեն, ստեղծեն ներդաշնակ ամուր կապ՝ ի շահ երեխաների զարգացման: Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է, որ մանկապարտեզը դառնա բաց համակարգ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք:
2. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք:
3. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված:
4. Ամիրջանայն Յու. Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն Երևան, 2005, 455 էջ
5. ՀՊՄՀ, «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում», Երևան, 2016:
6. Ջայնոտ Հ., Ծնողները և երեխաները, Երևան, 1988:
7. Ковтуненко Л. В. Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей // «Вестник Воронежского института МВД России», 2012.
8. Сенько Т.В. Психология взаимодействия : Часть третья: личность в семейном социуме: – Мн.: Карандашев, 2000.
9. Սուխոմլինսկի Վ.Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան 1977, 319 էջ
10. Боулби Джон. Привязанность. — М.: Гардарики, 2003.
11. https://hy.warbletoncouncil.org/valores-familiares-1850 /02.08.2023/